№ 137 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 1889 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 № 137

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԱՌԱՋԻԿԱՑ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

# „ՄՇԱԿ“

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

*կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական* ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» *տարեկան գինը* 10 *բուբլի է, վեց ամսվանը* 6 *բուբլի։*

Գրվել «ՄՇԱԿԻՆ» *կարելի է* ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ (*Բաթումակայա և Բազարնոյա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը*)։

*Կայսրութեան ուրիշ քաղաքներից* «ՄՇԱԿԻՆ» *գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով.* ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», *իսկ արտասահմանից.* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

# НОВОЕ ОБОЗРѢНІЕ

## ВЪ 1890 ГОДУ

### (СЕДЬМОЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Съ 12-го ноября 1887 г. «Новое Обозрѣніе» выходитъ двумя изданіями, изъ которыхъ *первое*, вечернее, предназначено для восточнаго Закавказья и сдается на вечерній поѣздъ желѣзной дороги, а *второе* утреннее,—для гор. Тифлиса, западнаго Закавказья и Россіи.

Условія подписки, съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р. 50 к., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

За объявленія, изъ губерній и областей кавказскаго края взимается по 8 к. за строку петита на 4-й страницѣ и по 15 к. за такую-же строку на 1-й стр. За всѣ остальныя объявленія—по 10 к. за стр. петита на 4 стр. и по 15 к. за такую-же строку на 1 стр.

Объявленія изъ внѣ-кавказскихъ городовъ принимаются исключительно въ «Центральной конторѣ объявленія», бывш. Л. Метцль, въ Москвѣ, на Мясницкой улицѣ, въ д. Спиридонова.

Подписка и объявленія принимаются:

а) ВЪ ТИФЛИСѢ: въ конторѣ газеты, Головинскій проспектъ, домъ Читахова, № 12.

б) ВЪ ОТДѢЛЕНІЯХЪ КОНТОРЫ:

1) ВЪ БАКУ—при аптекарскомъ магазинѣ И. Г. Чубинова, на Михайловской улицѣ домъ Мирза-Авакова и Карабегова.

2) ВЪ КУТАИСѢ—при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ бульвара, въ домѣ Г. Андроникова.

3) ВЪ БАТУМѢ—при конторѣ М. С. Бетанова, Набережная, домъ Ферадъ-Бега.

в) У АГЕНТОВЪ КОНТОРЫ:

1) ВЪ Г. ШУШѢ—С. О. Ананьева, на площади Топханэ.

2) ВЪ Г. ГОРИ—Ир. И. Рамишвили.

3) ВЪ ЕЛИСАВЕТПОЛѢ—Г. А. Альтгаузена, при торговлѣ аптекарскими товарами.

Въ отдѣленіяхъ и у агентовъ подписка и объявленія принимаются по редакціоннымъ цѣнамъ, безъ всякой надбавки. Розничная продажа тоже производится безъ увеличенія платы, по 5 коп. за номеръ.

Иногородные адресуютъ свои требованія: **Въ Тифлисъ, въ редакцію «Новаго Обозрѣнія».**

Издательница О. А. Николадзе. Редакторъ М. А. Успенскій.

1—3.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեան.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անօգուտ և անմիտ տրտունջ. Գինու յետ ածելու եղանակը. Նամակ Գանձակից. Նամակ Գարաչիչաղից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.*

### ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆ

—

Սրբազան Արիստակէսը թողնում է Թիֆլիսը։ Նա, էջմիածնի Սինոդի թղթով, նշանակված է „ի պաշտօն ուսուցչութեան աստուածաբանական առարկայից ի Հոգևոր ճեմարանի սրբոյ Աթոռոյ։“

Ուրեմն Սինոդը, համաձայն չէ „Արարատ“ ամսագրի մտքերի հետ Արիստակէսի մասին, և սրբազանին ճեմարանում աստուածաբանութեան ուսուցիչ կարգելով, ապացուցանում է թէ էջմիածնում համոզված են որ Օրմանեան եպիսկոպոսից յետոյ Արիստակէս Սեդրակեան մեր ամբողջ հոգևորականութեան մէջ միակ աստուածաբանն է, որին կարելի է առաջարկել այդ առարկայի ամպիոնը էջմիածնի ակադեմիայում։

Քաղում ենք մի քանի տեղեկութիւններ Արիստակէս եպիսկոպոսի մասին „Աղբիւր“ ամսագրում տպված նրա կենսագրութիւնից։

„Արիստակէս սրբազանն այժմ 44 տարեկան է. նա ծնվել է 1845 թվին Սուրմալու գաւառի Խալֆալու գիւղում։ Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում իր ուսումը ստանալուց յետոյ, նա ձեռնադրվել է սարկաւագ Մոսկվայի հայոց եկեղեցու համար։ Մոսկվայում երկու տարու չափ մնալով և ծառայելով եկեղեցուն, նրա գլխաւոր նպատակը եղել է կատարելագործել իր ուսումը մասնաւոր ուսուցիչների օգնութեամբ։ Զը տանելով հիւսիսային կլիման, Արիստակէսը վերադարձել է էջմիածին, ձեռնադրվել է վարդապետ և ապա. 1866 թվին, ինքնակրթութիւնը շարունակելու փափագով, ուղևորվել է Կ. Պոլիս, ուր մի եկեղեցում քարոզիչ նշանակվելով, շարունակել է իր ուսումը, մի և նոյն ժամանակ ֆրանսերէն լեզուն ուսումնասիրելով։ Դրանից յետոյ Եղիազար արքեպիսկոպոսը Բեսարաբիայի թեմի կառավարիչ նշանակվելով՝ կանչում է Սեդրակեանին իր թեմը և իր հետ տանում է Մոսկվա և Պետերբուրգ։ Ղարաբաղի թեմի առաջնորդի փոխանորդի պաշտօնը կարճ ժամանակ վարելուց յետոյ, Սեդրակեանը շուտով ստանում է Տաթևի վիճակի յաջորդութիւնը, ուր և մնում է մինչև 1868 թիւը։ Ապա 1869 թվին իր խնդիրքի համաձայն Երնջակի ս. կարապետի վանքի վանահայրութիւն ստացաւ և մնաց այդ պաշտօնում մինչև 1874 թ., երբ կանչվեց Էջմիածին և նշանակվելով նոր բացվելի ճեմարանի ուսուցիչ, ուղարկվեց Կովկասի թեմերը ընտիր աշակերտներ ժողովելու համար։ Այնուհետև 75—76 դպրոցական տարում Սեդրակեան հայկաբանութեան ուսուցիչ էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, իսկ տարվայ վերջը նշանակվեց կառավարիչ Ղարաբաղի թեմի, ուր և մնաց մինչև 1880 թիւը։ Այնուհետև երկու տարի ուսուցչութիւն արաւ ճեմարանում և 1882 թվին մայիսի 9-ին, Գէորգ կաթողիկոսը ձեռնադրեց նրան եպիսկոպոս և նշանակեց առաջնորդ Թիֆլիսի հայոց թեմի, ուր մուտք գործեց 1883 թ. փետրվարի 20-ին, իսկ 1889 թվի հոկտեմբերի 16-ին տուեց իր հրաժարականը, խնդրելով, որ Հոգևոր Բարձր իշխանութիւնը թոյլ տայ իրան հեռանալ Խրիմի ս. Խաչ վանքը“։

Սրբազանը միշտ պարապել է գրականութեամբ և ունի բաւական շատ թէ աստուածաբանական և թէ պատմական անտիպ գրուածներ։ Սրբազանի կատարած գործերը, որտեղ նա եղել է, նրա համակրելի բնաւորութիւնը՝ ամենքին յայտնի են։ Այդ է պատճառը, որ նա մեծ ժողովրդականութիւն ունի ազգի մէջ։ Իսկ նրա գլխաւոր արժանաւորութիւնն այն է, որ նա միշտ հաւատարիմ է մնացել հին հայոց աւանդական եկեղեցական սկզբունքին, դաւանելով այն գաղափարը, որ քրիստոնէական եկեղեցին, բաղկացած լինելով հոգևորականներից և ժողովրդից, այդ երկու դասակարգերը բոլոր եկեղեցական գործերում միշտ փոխադարձ համերաշխութեամբ պիտի միասին գործեն և թև թևի տուած ընթանան։

Լաւ աստուածաբան լինելով, և ուսումնասիրած լինելով թէ մեր և թէ օտար եկեղեցիների պատմութիւնը, Արիստակէս սրբազանը լաւ հասկացել է մեր և արևմտեան-եւրոպական, կաթոլիկ եկեղեցու բռնած ընթացքի, ուղղութեան զանազանութիւնը։

Հայոց եկեղեցու աւանդական ոգին միշտ եղել է կատարեալ փոխադարձ համերաշխութիւն հոգևորականութեան և ժողովրդի մէջ։

Այդ ուղղութեանն է հետևել և յոյս ունենք միշտ կը հետևի Սեդրակեան եպիսկոպոսը։

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ԱՆՕԳՈՒՏ ԵՒ ԱՆՄԻՏ ՏՐՏՈՒՆՋՆԵՐ

—

*Մեր կեղծ-ժողովրդասէրներից անդադար հեռանալ արտունջը կարելի է լսել. «ամբոխը փչանում է. նա գինետներում, անբարոյականացնող տեղերում է անցկացնում իր ժամանակը. նա արբեցողութեամբ է պարապում և ոչ մի լաւ բանի ետևից չէ ընկնում»*

*Սակայն այդ տեսակ մարդիկ, այդպիսի ունայն գանգատներ անելով, երբէք իրանց նեղութիւն չեն ուզում տալ մտածելու այն մասին, թէ հապա ինչ անէ մեր ժողովուրդը, հապա ինչով զբաղվի ամբոխը, որտեղ գնայ մի փոքր ուրախ և օգտաւէտ կերպով ժամանակ անցկացնելու։*

*Ասում են թէ՝ ամբոխի մարդը գենետուն չը պիտի գնայ, անբարոյական զուարճութիւնների ենթակայ չը պիտի լինի, արբեցողութիւնից հեռու պէտք է կենայ, և աւելի բարեկիրթ, աւելի ազնուացնող զուարճութիւնների ետևից պէտք է ընկնի։*

*Միշտ և ամեն տեղ մի և նոյն «պէտք է, պէտք է և պէտք է։» Բայց բաւական է այդպիսի «պէտքէներով» ինքնախաբէութեան մէջ ընկնել, քանի որ լոկ խօսքերով երբէք չէ կարելի ամբոխի առաջը կտրել, և նրան գինետներից, անբարոյականութեան տեղերից, և փողոցային շրջմոլութիւնից ուղղել դէպի աւելի լաւ տեղեր, դէպի դպրոց, դէպի ընթերցարան, դէպի թատրոն, մի խօսքով դէպի աւելի կրթիչ տեղեր...*

*Տգիտութեան մէջ խորասուզված ամբոխին, գրել-կարդալ չիմացող և ոչինչ լաւ բանի մասին գաղափար չունեցող ամբոխին հրաւիրում են դէպի դպրոց, դէպի ընթերցարան, դէպի թատրոն և դէպի հասարակական կրթիչ հիմնարկութիւնները, մինչդեռ մեր ամբոխը նոյնքան է հասկանում գրքի, դպրոցի և գեղարուեստի ճաշակը, որքան Կրիլովի կապիկը ակնոցների նշանակութիւնը։*

*Ամբոխը գրել-կարդալ չը գիտէ,—նրան ասում են, թէ ինչու նա չէ կարդում. ամբոխը հասկացողութիւն չունի թէ ինչ է երգը, թէ ինչ է մուղիկան և գեղարուեստը,—նրան մեղադրում են թէ ինչու նա թատրոն, օպերա չէ գնում, այլ գնում է ցիրկ՝ կլոունների հետ միասին զուարճանալու։ Ամբոխը չէ հասկանում այն խրատները, որ նրա գլխին կարդում են եկեղեցում, և նրան մեղադրում են թէ ինչու նա գինետներն է յաճախում՝ անբարոյական տեղերում իր գրպանին և իր առողջութեանը վնասելով։*

*Սովորեցրէք այդ ազէտ, մոռացված, բարոյապէս ազքատ ժողովրդին կարդալ, սովորեցրէք նրան գիրք բռնել, միջոց տուէք ամբոխի մարդուն հասկանալու ձեր գեղարուեստը, ձեր գաղափարները, և երբ այդ բոլորը հասկացրած կը լինէք, այն ժամանակ միայն մեղադրեցէք, թէ ինչու նա արբեցողութեան, անբարոյականութեան, շրջմոլութեան է դիմում, փոխանակ՝ այն տեղերը գնալու, ուր նրա միտքը օգտակար սնունդ կարող է ստանալ։*

*Պահանջել մեր ամբոխից, որը ոչ մի միջոց չունի աւելի լաւ և աւելի կրթիչ կերպով անցկացնելու իր ժամանակը, որ նա խուսափէր և իր այժմեան զուարճութիւններից,—ինչքան էլ այդ զուարճութիւնները անբարոյականացնող չը լինէին,—չենք կարող. որովհետև ամբոխը, ինչպէս մի կենդանի մարմին, նոր տպաւորութիւններ և իրան հասկանալի զուարճութիւններ է ուզում...*

*Միջոց տուէք այդ ամբոխին աւելի լաւ և աւելի բարձր պահանջներ ունենալու, ապա թէ ոչ, նա միշտ կը փախչի՝ դպրոցից դէպի գինետուն, թատրոնից դէպի ցիրկեր, և ծիծաղելով ձեր գլքի և ձեր քարոզի վրա, կը վազի այն տեղերը, ուր նրա վայրենի ինստինկտները կատարեալ լիութիւն են ստանում...*

Խ. Մ.

### ԳԻՆՈՒ ՑԵՏ ԱԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

—

*Ինչպէս ամեն բան ունի իր ժամանակը, այնպէս և գինու յետ ածելու ժամանակը որոշելիս խիստ ընտրութիւն պիտի անել։ Արդեօք բարեխառնութեան աստիճանը ազդեցութիւն և նշանակութիւն չունի։ Կասենք որ ունի և շատ մեծ նշանակութիւն ունի, և ահա թէ ինչու։*

*Դիրքը, մանաւանդ նրանում թմրութեան մէջ գտնված զանազան ֆերմանտացիաների սերմերը տաքութեան ազդեցութեան տակ իրար են գալիս և սկսում են վերև բարձրանալ և լողալ գինու մէջ, որը և խանգարում է գինու պարզութեանը։ Այն ինչ գինու յետ ածելու միակ նպատակը գինու պարզ մասերը դիրքից բաժանելն է։ Հէնց այդ իսկ հանգամանքը ի*

նկատի ունենալով, պէտք է ընտրել ցորեան և չոր օր և բացի դրանից լաւ կը լինի, եթէ մի բարակ հիւսիսային քամի լինի։ Եթէ աջողվի մի այդպիսի օր ունենալ, պէտք է ձեռքից չը թողնել և օգտվել յարմար եղանակից։

Գինու յետ ածելը կայանում է նրանում, որ դիրքի վրա գտնված պարզած գինին դիրքից հեռացնեն և լցնեն մի այլ դատարկ տակառի մէջ։ Միշտ, երբ գինին պէտք է մի որ և ամանի մէջ լցնել, նախ և առաջ ամանը պէտք է մաքրել լուանալ և ծծումբ ծխել։

Գինու յետ ածելու համար մի քանի եղանակներ կան, որոնց ժամանակ գործ են ածվում զանազան գործիքներ։ Եղանակների ընտրութեան ժամանակ պէտք է ի նկատի ունենալ, որ որքան կարելի է գինին քիչ ջարդուի, քիչ ծեծուի։

1) Ամենահասարակ միջոցը նա է, որ լիքը տակառի ծորակով գինին դատարկում են վեղրոներով և կամ փայտից շինած ամանների միջոցով և գինին տեղափոխում են դատարկ տակառի մէջ։ Միշտ պէտք է աշխատել, որ գինին պարզ լինի. հէնց որ սկսեց պղտորել, այլ ևս պղտորը չը պէտք է պարզի հետ խառնել, այլ մի ուրիշ տակառում պիտի տեղաւորել։ Ճիշդ է այդ միջոցը շատ հեշտ է և պարզ, բայց գինին շատ է ջարդվում և ծեծվում, որի հետևանքը գինու փայլունութեան չոչոչալու պակասելն է, որի պատճառով և գինու նրբութիւնը կորչում է։ Դրան կարելի է անուանել նահապետական միջոց։

2) Գործ են ածում նոյնպէս սիֆոնը, որը մի ծնկաւոր խողովակ է։ Հասարակ և ամենապարզ սիֆոնը հայոց «Ր» տառի նման է։ Ահա թէ ինչպէս են գործ ածում սիֆոնը։ Նախ սիֆոնը հակառակ ուղղութեամբ են բռնում և մեծ խողովակով սկսում են գինին լցնել սիֆոնի մէջ, հէնց որ գինին փոքր խողովակը լցնում է, այդ ժամանակ այդ խողովակը փակում են մատով և շարունակում են լցնել մեծ խողովակը։ Երբ մեծ խողովակն էլ է լցվում, այդ ևս մատով փակում են և ապա սիֆոնին նորից իր բնական դիրքն են տալիս՝ զգուշութեամբ շրջելով։ Փոքր խողովակը ընկղմում են գինով լիքը տակառի մէջ և երկու խողովակների բերանն էլ բաց են թողնում, այդ միջոցին գինին լիքը ամանից սիֆոնի միջոցով անցնում է դատարկ տակառը, և ահա թէ ինչու։ Լիքը սիֆոնի գինին թափվում է, սիֆոնի վերին մասում կազմում է դատարկ տարածութիւն, լիքը տակառի գինին բարձրանում և բռնում է այդ դատարկութիւնը։ Նոյն սիֆոնի հետ կարելի է և այլ կերպ վարվել։ Սիֆոնի փոքրիկ խողովակը ընկղմում են գինու մէջ և միւս խողովակի ծայրից սկսում են օդը ծծել, որի պատճառով և գինին բարձրանում է սիֆոնի մէջ, այդ ժամանակ պէտք է զգուշութեամբ մեծ խողովակը իջեցնել դատարկ տակառի մէջ և գինին առաջվայ նման կը տեղափոխվի մէկից դէպի միւսը։

Լիքը տակառի մէջ եղած սիֆոնի մասը մինչև յատակը չը պիտի իջնի, այլ միշտ գինու պարզ շերտերում պիտի կանգ առնի, հակառակ դիպուածում դիրքը ժամ կը գայ և ամբողջ տակառը կը պղտորի։ Ուրեմն այդ հասարակ և պարզ սիֆոնը զանազան մեծութիւն ունեցող տակառների համար չէ կարելի գործածել։ Այդ անյարմարութեան առաջն առնելու համար աշխատում են այնպէս անել, որ գինին խողովակի ստորին մասով չը ներս մտնի։ Լիքը տակառի մէջ իջնող խողովակի բերանը փակում են և մի երկու վերշոկ բարձրութեամբ խողովակի չորս կողմը ծակեր են անում։ Այդ ժամանակ սիֆոնը իր այդ խողովակի ծայրով յենվում է տակառի յատակի վրա և գինին ներս է մտնում երկու վերշոկ բարձրութիւնից, որի պատճառով և միշտ մաքուր գինի է ստացվում։ Այդ սիֆոնը ամեն տակառի համար էլ գործադրելի կը լինի, եթէ միայն փոքրիկ խողովակը մեր ունեցած մեծ տակառի խորութիւնից կարճ լինի։ Կան աւելի կատարելագործված սիֆոններ, որոնց փոքրիկ խողովակը ոչ թէ ընկղմվում է գինու մէջ, այլամբացնվում են տակառի ծորակին։ Բացի դրանից կայ մի երկրորդական խողովակ սիֆոնի փոքրիկ մասին կպած, որով աւելի յարմար կերպով կարելի է օդը ծծել։ Ի հարկէ, ծծելուց յետոյ, երբ արդէն գինու հոսանքը սկսվել է, այդ երկրորդական խողովակը ծորակով կամ խցանով փակում են։

Սիֆոնի դերը կատարում է և նոյն ֆիզիկական սկզբունքների հիման վրա կաուչուկեայ խողովակը։ Այդ կաուչուկեայ խողովակի մի ծայրը դնում են լիքը տակառի գինու մէջ, իսկ միւս ծայրից սկսում են օդը ծծել և հէնց որ գինին հասնում է բերաններին, այդ ծայրը իջեցնում են դատարկ տակառի մէջ։ Սիֆոնը գործ է ածվում այն ժամանակ, երբ որ լիքը և դատարկ տակառը միմեանցից հեռու չեն, իսկ կաուչուկեայ խողովակը գործ են ածում այն ժամանակ, երբ տակառները միմեանցից հեռու են։

Այն գինետներում, որտեղ մեծ քանակութեամբ գինի են պատրաստում, այդ սովորական միջոցներով չեն բաւականանում, այլ գործ են ածում պոմպեր։

Սիֆոնը և պոմպը պէտք է գերազասել սկզբում նկարագրած մեր միջոցներից, թէև ինքն ըստ ինքեան շատ էլ յարմար միջոց չէ, որովհետև գինին դարձեալ շատ է ծեծվում ու ջարդվում։ Նոր և հասարակ գինիները տեղափոխելիս կարելի է գործածել սիֆոնը և կամ կաուչուկեայ խողովակը։ Իսկ եթէ հին գինու տեղը պիտի փոխել, այն ժամանակ պիտի փուքսը գործ ածել։ Փուքսը գործ են ածում, երբ որ տակառները մի և նոյն բարձրութեան վրա են գտնվում և միմեանց կողքի են։

Նախ և առաջ դատարկ տակառի և լիքը տակառի ծորակները մի ընդհանուր խողովակով միացնում են միմեանց հետ, երկու ծորակն էլ բաց են թողնում և գինին տեղափոխվում է դատարկ տակառի մէջ մինչև տակառների կէսը և հէնց որ գինու մակարդակները երկու տակառների մէջ էլ հաւասարվում են, այլ ևս հոսանքը կանգ է առնում։ Այդ ժամանակ փուքսի միջոցով օդ են ներս ածում այն տակառի մէջ, որից պիտի գինին դատարկին և ճնշում գործելով հեղուկի վրա, գինին անցնում է միւս տակառի մէջ, հէնց որ տեսնում են սկսում է գինին պղտորվել, ծորակները փակում են։ Ի հարկէ, փուքսով օդ ներս ածելիս պէտք է տակառի վերին անցքը, որի մէջ հագցրած է փուքսի ծայրը, լաւ ամրացնել, որպէս զի տակառի օդը չը կարողանայ այդտեղից դուրս փախչել։

Այս անգամ հոսանքը ստորին մասից էր կատարվում, բայց երբեմն էլ գինին վերևի մասից են անցկացնում և ահա թէ ինչպէս։ Լիքը տակառի վերևի անցքում ամրացրած է փուքսը և մի երկծնկանի խողովակ մի ծայրով մտնում է լիքը տակառի մէջ, փուքսի ծայրի մատով, իսկ միւս ծայրը մտնում է դատարկ տակառի մէջ։ Լիքը տակառի վերին անցքը լաւ պնդացնում են և ապա փուքսի միջոցով օդ ներս ածում և ճընշում գործելով գինու վրա, գինին ծնկաւոր խողովակի միջով անցնում թափվում է դատարկ տակառի մէջ։ Առաջինը պէտք է դերադասել երկրորդից, որովհետև գինին ստորին մասով տեղափոխվելիս այնքան չէ ծեծվում։

Այս երեք միջոցից, այսինքն նահապետական միջոցից, սիֆոնից և փուքսից վերջինս պէտք է գերադասել։

Մինչև այժմ մեր նկարագրած միջոցները վաղուց արդէն գործադրվում են և երեք դիպուածումն էլ առաջ գինին են տակառից տեղափոխում և ապա դիրքը ժողովում առանձին տեղ։

Բայց մի երկու շաբաթ առաջ ֆրանսիական «Le Progrès Agricole» կոչված մասնագիտական լրագրում պատահեցինք մի այլ միջոցի, որը միանգամայն զանազանվում է մեր նկարագրած միջոցներից։ Այդ լրագիրը, որի հեղինակութեան վրա կարող ենք միանգամայն վստահ լինել, բաւական հաւանութիւն է տալիս այդ նոր ձևին։ Այդ միջոցի գլխաւոր էական մասը և հիմքը նա է, որ առաջ դիրքն են պարզ գինուց բաժանում, այնպէս որ այլ ևս կարիք չը կայ գինին իր նախկին տակառից հանել, այդ գինին կարող է, նոր ձևի շնորհով, միշտ մի և նոյն տակառի մէջ մնալ, որը ինքն ըստ ինքեան շատ մեծ առաւելութիւն է։

Ցայտնի է, որ դիրքը աւելի ծանր է քան թէ գինին, դրան իբրև ապացոյց կարող է ծառայել այն, որ դիրքը տակն է նստում։ Եթէ ուրեմն տակառի ամենացած մասում անցք անենք, տակառի միջինը կաշխատի դուրս թափվել, բայց ամենից առաջ դիրքը դուրս կը գայ իբրև աւելի ծանր քան թէ գինին։ Գինին յետ ածելու նոր ձևի հնարողը այդպէս էլ անում է։ Նա տակառի ամենացածր մասում անցք է անում, անցքի տակ նախապէս մի վեղրո կամ բաց տակառ է տեղաւորում, դիրքը իբրև աւելի ծանր դուրս է թափում և հէնց որ սկսում է մաքուր գինին դուրս գալ, անցքը փակում է։ Այդպէս և վարվում է միւս տակառների հետ և ապա կիսատները լցնում է։ Թէ որքան է մաքրվում տակառը իր դիրքից, այդ դժուար է ասել։ Ինչ է իցէ, այդ միջոցը, այդ ձևը լուրջ ուշադրութեան է արժանի և մեծ ապագայ է խոստանում։ Եթէ այդ նոր միջոցը տարածվի, այն ժամանակ յետ ածելու ամբողջ տեսութիւնը կը փոխվի, որովհետև հիմնական փոփոխութիւն է մտցնվում նախկին և այս նոր ձևի յետ ածելու միջոցի մէջ։

Մ. Մուսինեանց

## ՆԱՄԱԿ ԴԱՐԱՋԻՋԱԳԻՑ

—

Նոյեմբերի 24-ին.

Այն գիւղերում, ուր խառն կերպով բնակվում են հայեր ու թուրքեր, դրանց առօրեայ ընթացիք կեանքի պայմանները գրեթէ ոչնչով չեն զանազանվում միմեանցից։ Թուրք հասարակութեան ընտանութեանը համակրում է նրա հարևան հայ ազգաբնակութիւնը։ Այդպիսի գիւղերում, անկարծիք, հայերը վաղուց ի վեր վարակված են իրանց հարևան թրքական մոլեռանդ սովորութիւններով, եթէ ոչ ընդհանուր, գոնէ մի փոքրագոյն մասով։ Դրա համար ապացոյցներ կարող են լինել հետեւեալ փաստերը։ Օրինակ, այն գիւղերում, որոնք ունեն հայ և թուրք բնակիչներ, ժողովուրդը բացառապէս սովորութիւն է դարձրել, իրանց տներում նոյն իսկ օր ցերեկով միշտ խէնջալներ կապել, ձեռներին կըրել մահակներ, մի քանի կուսակցութիւնների բաժանվել, ինարիգաներ լարել, աղջիկներ փախցնել... և այլն։ Այս բոլորը թրքական ընտանութեան յատուկ սկզբունքներ են, որոնց կատարելը իրանց չրջանում գրեթէ մեծ քաջագործութիւն է համարվում և որոնցից օրինակ առնելով հայերը սկսում են գործ դնել, աշխատելով որքան հնար է յետ չը մնալ թուրքերից, այլ դեռ գերազանցել։ Այդպիսի գիւղերից մինը Դարաչիչագի չրջանի Բժնի (հնումը Բյնի) գիւղը կարելի է համարել, որը ունի հայ և թուրք բնակիչներ։

Սրանից քանի մի օր առաջ այդ իսկ գիւղացի մի քանի հայ երիտասարդներ փախցրին իրանց հարևան մի աղջկան, երբ վերջինս իր մօր և քրոջ հետ միասին գնում էր ուխտելու «Կարմիր աւետարանը», որը գտնվում է 6—7 վերստ հեռու մի գիւղում։ Դէպքից օգուտ քաղելով, խլկոյն երիտասարդները հետամուտ են լինում նրանց. ճանապարհի վրա եղեռնագործներից մի երկուսը բռնում են մօրը և մի աղջկայ ձեռքերը, իսկ միւսը քրոջ փախցնում տանում են մի այլ գիւղ, իրանց մի բարեկամի տուն և պահում են այն նպատակով, որ համաձայնի ամուսնանալ իրանցից մինի հետ։ Դրա մասին աղջկայ ծնողները գանգատել են տեղական պրիստաւին։ Գործը դեռ վերջացած չէ։ Բանից երևում է, որ այդ իսկ երիտասարդը, որ կամենում է բռնի կերպով իր հետ ամուսնացնել այդ իր փախցրած աղջկան, մի քանի անգամ հրապարակապէս առաջարկել է նրան իրան կին դառնալու համար, բայց աղջկայ ծնողները մերժել են։ Շատերը ենթադրում են, որպէս թէ այդ փախուստը տեղի է ունեցել նոյն իսկ աղջկայ համաձայնութեամբ։

Այստեղ հարկաւոր ենք համարում պատմել մի դէպք, որ պատահեց այդ իսկ Բժնի գիւղում, սրանից մի քանի ժամանակ առաջ։ Այդ տեղ թրքական թաղում մի թուրք երիտասարդ փախցրեց մի աղջիկ։ Աղմուկը հասաւ գիւղական քեխվային, որը անմիջապէս գնաց հարցաքննելու գործը։ Գիւղական խալիֆան—գրագիրը բացակայ էր գիւղից, իսկ տանուտէրը անգրագէտ էր, ուստի նուաստ գրագրի պաշտօնով կանչվեցի այդտեղ։ Մի քանի ողոր-մոլոր անցքեր ունէր թրքական մութ խրճիթը, որի մի անկիւնում, վարագուրի յետև կուչ եկած էր արդէն նորահարս դառած-թրքուհին։ Ցանուտէրը հարցրեց փախչող աղջկանից, իսկ ես գրեցի նրա պատասխանները։ Նրա ասածների մէջ չը կար անհամաձայնութեան մի նշան անգամ։ Գործը այն կերպարանքն ստացաւ, որ նոյն իսկ աղջիկը (վաղօրոք) տեսել էր իր սիրած երիտասարդին և իր համաձայնութեամբ գնացել նրա հետ։

Թուրք երիտասարդների չրջանում, աղջիկ փախցնելը համարվում է մեծ քաջագործութիւն և դրանց հարևան հայ երիտասարդների տրամադրութիւնը ևս հակվելով դէպի թրքական սնահատեմը, սկսում է անգիտակցաբար զինվել այդ վերը յիշած կարծիքներով։

Գ. Ս.

## ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Նոյեմբերի 26-ին.

Նոյեմբերի 23-ին քաղաքային կլուբի դահլիճում ս. Յովհաննէս եկեղեցու երկսեռ դպրոցների ուսուցչական խումբը ներկայացրեց «Օրիորդ Բերոյեանց» և «Դալալ-Ղազո»։ Ներկայացումից գոյացաւ 260 ր., որից ծախսը դուրս գալով՝ մօտաւորապէս 230 ր. զուտ արդիւնք կը մնայ ուսումնարանին։ Դահլիճը տրված էր ձրի։ Տոմսակները վաճառելը աջողութեամբ էր ընթանում։ Եթէ դահլիճի սղութիւնը չը լինէր, աւելի քան 300 ր. արդիւնք կը լինէր՝ այնքան մեծ էր տոմսակ պահանջողների քանակութիւնը։

Ինքն ըստ ինքեան աւելի ուշադրութեան է արժանանում այդ աստիճանի պահանջը նրա համար, որ երկու չաբաթ առաջ սիրողների մի այլ խումբ մի երկու ներկայացումներ էր տուել։ Հետևաբար կարելի է ասել, որ համաձայն հասարակութեան դէպի թատրոնն ունեցած պահանջի՝ կարող են պարբերաբար տեղի ունենալ ներկայացումներ, եթէ միայն ամեն անգամ ստիպված չը լինեն դժուարութիւնների, խոչնդոտների հանդիպելու՝ բեմի, դահլիճի և այլ նպատաւոր յարմարութիւնների վերաբերութեամբ։ Որքան նպատակայարմար կը լինէր, եթէ ուսումնարանն ունենար իր սեփական բեմն ու դահլիճը, թատրոնական սարքն ու կարգը։ Այսուհետև, գոնէ, երբ չօչափելի է պահանջը, երբ հարկն ակներև է, իրագործվէր վաղուց յետէ ծրագրած ուսումնարանի փառաւոր յատակագիծը իր ահագին դահլիճով և չքեղ բեմով.... Եւ ինչու չիրագործել, երբ միջոցներ կան, երբ կարևոր իրեղէնների մի մասը մինչև անգամ վաղուց հոգացված են։ Անկասկած կիրագործվի, եթէ գործի գլուխ կանգնածները չը բաւականանային իրանց «երեկայական» գործունէութիւնները չարունակ գովելով, եթէ մոռանային իրանց մասնաւոր, նեղ-անձնական յարաբերութիւնները դէպի այս կամ այն անձնաւորութիւնը։ Եւ այն ժամանակ թատրոնը իր իսկական նպատակին կը ծառայէր, այն ժամանակ առանց որ և է դժուարութիւնների կարելի կը լինէր ժողովրդի մեծամասնութեանը դիւրըմբռնելի պիէսաներ ներկայացնել, ամենամատչելի գներով ամբոխին գրաւել դէպի թատրոն. այն ինչ ներկայ հանգամանքներում այդ մեծ մասամբ անտես է առնվում։

Եթէ պատահում է այս կամ այն դժուարութիւններին մի կերպ յաղթահարելով տարէնը մի կամ երկու անգամ ներկայացումն տալ, այն էլ այնպիսի գներ է նշանակվում, որ ստորին դասակարգը մօտ չէ կարողանում գալ, և այսպիսով միշտ զուրկ է մնում թատրոնից։ Ուրիշ խօսքով մինչև այժմ տեղի ունեցած ներկայացումներն եղել են այնպիսի այցելուների համար, որոնցից մեծամասնութիւնը մինչև անգամ կարիք չէ ունեցել այդպիսի ներկայացումների, սակայն յաճախել է, որովհետև ներկայացումները մեծ մասամբ բարեգործական նպատակով են եղած։ Այսպիսով գլխաւոր տեղը բռնած է եղել ոչ թէ թատրոնի գաղափարը, նրա կրթող ներգործութիւնը, այլ նիւթականը—փողը։ Թատրոնը ծառայել է որպէս միջոց փող ժողովելու։ Այն ինչ, եթէ ուսումնարանն ունենայ իր սեփական բեմը, այն ժամանակ թատրոնը ամենայն հեշտութեամբ կարող կը լինի իր կոչմանը ծառայել, իր արժանավայել տեղը բռնել։ Կրկնում ենք, կարող կը լինի, որովհետև մեծ դժուարութիւն չի լինի երկու ծխական երկսեռ դպրոցների 15—20 ուսուցիչների ու ուսուցչուհիների համար երկու կամ երեք շաբաթը մի անգամ ներկայացումներ յաջողեցնելը։

Դժուարութիւնների մէջ առաջին տեղն է բռնում տեղական կանանց ու օրիորդների չը մասնակցելը. ներկայացումներին չեն մասնակցում, ոչ միայն վստահութիւն չեն ունենում բեմ կոխելու, այլ և մահացու չափ ծանր է թվում ինքն ըստ ինքեան բեմ դուրս գալը, այնտեղից հասարակութեան երեսին նայելը, ժպտալն ու շարժուածքներ անելը։ Եւ զարմանալի էլ չը պիտի համարվի, քանի որ մեզանում կանանց և օրիորդների դրութիւնն ոչնչով չէ զանազանվում հարևան մահմետական կանանց կաչկանդված դրութիւնից.... Բացառութիւնը շատ աննշան է։ Որ և է տեղում տղամարդու հանդիպել, երեսին պարզ նայել, հարցին ուղղակի պատասխանելը անկարելի է, պէտք է կամ խոյս տայ, կամ մէջքը դարձնէ և կամ զանազան անճոռնի շարժուածքներով պատասխանէ։ Եւ եթէ պատահում

են այնպիսիներ, որոնք չեղվում են այդ մեծամասնութեան համար սրբացած սովորութիւններից, ոչ միայն կշտամբանքների են արժանանում, այլ և ամեն տեսակ զգրալի չարախօսութիւնների խաղալիք դառնում։

Կանանց և օրիորդների բեմից այս աստիճան խոյս տալն է եղել պատճառ, որ ներկայացումները գլխաւորապէս սահմանափակվել են «Սավուղ»-ներով, «Երուանդ»-ներ և «Արշակ»-ներով։ Սակայն ժամանակն իրն է վերցնում՝ թէկուզ որքան կատաղի լինեն խաւարամիտների չարախօսութիւններն ու կշտամբանքները։ Ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և այս տարի ուսուցչական ներկայացումներին մասնակցում էին տեղիս իգական սեռից։ Սա. անցեալ տարի տիկին Ա. Մելիք-Բէգլարեան «Էլի մէկ զոհում», այս տարի օր. Թ. Բաբաքեխեանց «Օրիորդ Բերոյեանց» պիէսայում։ Թէ տիկինը և թէ օրիորդը անուշադիր գտնվեցան զէպի հասարակաց կարծիքը, ոտնակոխ արին հնամոլների համար միմիայն անխախտ աւանդութիւնները և կատարեցին այն՝ ինչ որ թելադրում է գիտակցութիւնը... Տիկնոջ և օրիորդի արած առաջին քայլերի նշանակութիւնն առաւել գովելի է դառնում այն ժամանակ, եթէ յիշենք տեղական հանգամանքները, երբ մի խումբ դատարկաշրջիկներ և «անգործներ» ամենակեղտոտ ճանապարհներով ձգտում են ոտնակոխ անել ամեն մի ազնիւ և համեստ գործողի պատիւը։ Ցուսալով՝ որ վերոյիշեալ տիկինը և օրիորդը չեն դադարի աջակցելուց ապագայ հայ ներկայացումներին, ցանկանք, որ շատ հետևողներ գտնեն՝ ի նպաստ տեղիս թէ թատրոնական և թէ իրանց՝ կանանց հասարակութեան սթափման գործին։

Գ.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս յայտնի է արդէն ընթերցողին, այսօր, հինգշաբթի ժամը 3-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում Թիֆլիսի հայ հասարակութիւնը ճաշկերոյթ է տալիս թեմական առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսին։ Ճաշի ժամանակ կառավարիչ է նշանակված իշխան Նապոլէօն Ամատունի։ Ճաշի ժամանակ ճառ ասել, կամ կենաց թաս առաջարկել ցանկացողները պէտք է առաջուց դիմեն իշխ. Ամատունան և նրա համաձայնութիւնն առնեն։

—

Լսում ենք, որ Արիստակէս եպիսկոպոսը թողնելու է Թիֆլիսը կիրակի օրը, դեկտեմբերի 3-ին, կէսօրին։ Լսում ենք, որ Թիֆլիսից մինչև Աղստաֆա սրբազանի համար պատրաստված է արտակարգ գնացք։

—

Այլ և այլ հիւանդութիւններ տարածված լինելով Թիֆլիսում, մեր տպարանի գրաշարներից էլ մի քանիսներ հիւանդացել են։ «Մշակի» վրա բանող չորս հոգի գրաշարներից երկուսը հիւանդացել են։ Նմանապէս հիւանդացել են գրաշարներ և ուրիշ տպարաններում, այնպէս որ զըժւարութեամբ կարելի է ճարել հայ գրաշարներ հիւանդացածների տեղ։ «Մշակի» ներկայ համարը մենք մի կերպ դուրս ենք բերում և յոյս ունենք, որ մինչև շաբաթ օր մեզ կաջողվի գտնել ժամանակաւորապէս նոր գրաշարներ։ Քաղաքի ինչ տպարան էլ դիմում ենք, ոչ մի տեղ ազատ գրաշար չը կայ, և ամեն տեղ նոյն գանգատն ենք լսում՝ թէ գրաշարների համարեա կէսը հիւանդ են։

—

Ստացանք խորէն ծ. վ. Ստեփանէի աչխարհաբարի վերածած Մովսէս Խորենացու «Հայկական պատմութիւնը»։ Գրքին կպած է մի երկար առաջաբան և բազմաթիւ ծանօթութիւններ և յաւելուածներ։ Գիրքը տպված է ութածալ, Պետերբուրգում, Սկօրօխոդովի տպարանում և բաղկացած է ընդամենը 881 երեսներից։ Գրքի գինը համեմատաբար էժան է նշանակած, այն է՝ 1 ր. 50 կ.։ Կարելի է առնել թարգմանչից և Թիֆլիսի հայ գրավաճառներից։

—

Վաղը ուրբաթ, դեկտեմբերի 1-ին, կալուածական բանկի թատրոնում կը լինի կասսիր պ. Ա. Միրիմանեանի բենեֆիսը։ Կը խաղան Զուպպէի «Դօնա Ժուանիտա» օպերետը, որը մեծ աջողութիւն ունէր մայրաքաղաքի թատրոններում։ Ներկայացման կը մասնակցեն տ. տ. Տրօցկայա, Միլիտինա, Գօրսկայա, պ. Կլեմենտիև, Բիազի և այլն։

—

ԿԱՐՍԻՑ պ. Ալէքսանդր Պետրոսեան խնդրում է մեզ յայտնել հետեւեալը. «Արդէն վաղուց սկսված թարգմանում եմ На Разсвѣтѣ վէպը, որը այժմ լոյս է տեսնում «Вѣстникъ Европы» ամսագրում։ Այդ պատճառով թող յարգելի թարգմանիչները նեղութիւն չը կրեն նոյն վէպը թարգմանելու»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարից լինելու են տեղիս դումայի ձայնաւորների ընտրութիւնները։ Այժմանից իսկ պատրաստութիւններ են տեսնվում։ Ընտրողների մեծամասնութիւնը հայեր են»։

—

Երևանի առուտուրը թէև առհասարակ ընկած էր, բայց, ինչպէս մեզ գրում է մեր թղթակիցը, բամբակը մեծ քանակութեամբ քաղաք բերելու պատճառով վերջին օրերը առուտուրը սկսել է փոքր ինչ կենդանանալ։ Հացահատիկները համեմատաբար սակաւ են և թանգ։ Երևանում այս տարի ցրտերը շուտ են սկսվել և Նոյեմբերի 22-ից սկսեց արդէն ձիւն գալ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Երկու շաբաթ սրանից առաջ այստեղի Դալմի այդիների մօտ, անյայտ չարագործներ սպանել են էջմիածնեցի Ց. Նալբանդեանցին։ Չարագործները դիակից գլուխը կտրել, տարել էին»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Նոյեմբերի 20-ից Մանչեստրից «Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է հետեւեալը. «Ազգային-ազատամիտների այսօրվայ ժողովում Գլադստոն մի ճառ ասեց, որի մէջ նկատեց, որ 1880 թուին բրիտանական ժողովուրդը վայր դցեց մինիստրութիւնը, որը շատ քիչ համակրութիւն էր արտայայտում զէպի ուրիշ ազգերի տանջանքները. ապա հռետորը ասեց, որ ազատամիտ կուսակցութիւնը պատրաստ է ներկայումս նոյնպիսի ուշադրութիւն դարձնել արտաքին գործերի վրա, ինչպէս 1876 թուից մինչև 1880 թուականները։ Իր ճառի մէջ Գլադստոն կանգ առաւ Կրետէի դրութեան վրա, յոյս յայտնելով, որ դրանց վերաբերմամբ ցանկալի վճիռներ կը կայացնվեն։

—Վերջին ժամանակներում Վիէննայում այնպիսի սաստիկ ձիւն եկաւ, որ քաղաքում կառքերի և ձիաքաշի երթևեկութիւնը դադարեց։ Վեց հազար մարդ մի ամբողջ օր ձիւնը մաքրելով էր զբաղված։

—Զեխերը մտադիր են, ինչպէս գրում են Վիէննայից, Հուսսի ծննդեան օրը չեխական ազգային տօն դարձնել։

—Լոնդոնից գրում են, որ այժմեան մինիստրութիւնը շատ անհանդիստ է այն ժողովրդականութեան պատճառով, որ ստացել է ազատամիտ կուսակցութիւնը։ Լորդ Սալիսբրի իր մինիստրութեան ապագան հաստատուն դարձնելու համար մտադիր է մինչև 10 միլիոն ֆունտ ստերլինգ փոխառութիւն խնդրել՝ իրլանդական կալուածատէրերից հողերը յետ գնելու համար, որով յոյս ունի մի փոքր խաղաղացնել իրլանդացիների յուզված մտքերը։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«L'Union medicale» բժշկական թերթը մի դէպք է պատմում մօտ օրերս վախճանված երեւելի բժիշկ Ricord-ի մասին, որ ցոյց է տալիս թէ կարելի է լաւ մասնագէտ լինել, բայց վատ աղաքագէտ։ Ֆրանս-գերմանական պատերազմից առաջ 1870 թուին, Ricord միւս բժիշկների հետ միասին հրաւիրված էր Նապոլէօն III-ի հիւանդութեան մասին խորհրդակցելու համար։ Ինչպէս յայտնի է, Նապոլէօնը միզափամփուշտի քար ունէր։ Ricord միզագործիքը միղանցքի մէջ ներս մտցնելով, յայտնեց իր ընկերակիցներին, որ բաւական մեծութեամբ քար է նկատում Նապոլէօնի միզափամփուշտի մէջ։ Համախորհրդի նախագահ Rayer դարձաւ յայտնի վիրաբուժ Nelaton-ին և խնդրեց որ նա ևս իր կարծիքը յայտնի։ «Քար չը կայ», ասեց Nelaton.—«Ինչպէս չը կայ, պատասխանեց Ricord, եկէք միասին միզագործիքով քննենք. ես կը հաստատեմ որ կայ և քարը բաւական մեծ է»։—Հարկաւորութիւն չը կայ նորից քննելու, ասեց նախագահ Rayer, բաւական է, որ Nelaton քար չէ գտնում, էլ ինչու ի զուր տեղը նեղութիւն տալ կայսրին։ Ricord դարմացմամբ նայում էր Nelaton-ի վրա, որը մի այդպիսի պարզ հիւանդութիւն ուրանում էր։ Վերջը պարզվեց, որ հրամայված էր կայսրի միզափամփուշտի մէջ քարի մասին ակնարկութիւն անգամ չանել, եթէ մինչև անգամ քար էլ գտնվէր միզափամփուշտում։ Այդպէս էր ցանկացել Եվգենիա կայսրուհին, որովհետև, եթէ պաշտօնապէս յայտնվէր Նապոլէօնի իսկական հիւանդութիւնը, այն ժամանակ պետի քարահանութեան օպերացիան առաջարկվէր, որ այդ միջոցին անկարելի էր, որովհետև քաղաքական պատճառները ստիպում էին պատերազմ յայտնել Գերմանիային։

* * *

Լոնդոնում դիտաւորութիւն ունեն կառուցանել մի աշտարակ, որը Պարիզի Էյֆէլեան աշտարակից 200 ոտնաչափ բարձր կը լինի։

* * *

Հայերի կեանքի, հայոց ազգագրութեան, հայոց պատմութեան հետ ծանօթացնող յօդուածներ շարունակում են երևալ արտասահմանեան մամուլի մէջ։ Այդ տեսակ յօդուածներ տպվում են՝ անգլիական, ֆրանսիական, ամերիկական, գերմանական, հոլլանդական, բելգիական, շվեյցարական, իտալական և սպանիական լրագիրներում և ամսագիրներում։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 Նոյեմբերի։ Երէկ արտասահմանից վերադարձաւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։—Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի յիշատակին արձան կանգնեցնելու համար թագաւոր կայսրը նուիրել է իր սեփական գումարներից 10,000 ր., թագուհի կայսրուհին,—5,000 ր., թագաժառանգ Ցէսարեվիչը—1000 ր., իսկ կայսերական Ընտանիքի միւս անդամները 10,250 բուբլի։—«Гражданинъ» հաղորդում է որ այն նահանգների նահանգապետները, որտեղ յունվարից մտցնվում են զեմստվոյի մեծաւորների պաշտօնները, երէկ ընդունվեցան Գատչինոյում և ստացան գլխաւոր ղեկավարող ցուցմունքներ իրանց նոր պարտաւորութիւնների մասին։

ԽԱՐԿՕՎ, 26 Նոյեմբերի։ Հանքագործարանատէրերի ժողովը փակվեց։

ԼՈՆԴՈՆ, 26 Նոյեմբերի։ Էմին-փաշան 10 ժամ շարունակ ուշաթափ մնաց։ Այժմ նրա դրութիւնը աւելի լաւ է և մի 10 օրից յետոյ նա կը տեղափոխվի Զանզիբար։

ՊԱՐԻԶ, 27 Նոյեմբերի։ Մէնելիքի զօրապետները Սէյում և Սերդաս, իտալական զօրքի մէջ ծառայող տեղական զօրաբաժնի օգնութեամբ՝ յաղթեցին Մանդաշիային և Բաս-Ալուլային։ Ընդդիմադրութիւնը ոչնչացրած է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 Նոյեմբերի։ Երէկ, Ձմեռային պալատում, սովորական հանդէսով տօնվեց Ս. Գէորգեան տօնը, որի ժամանակ Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչ երդում տուեց՝ թագաւոր Կայսրի, թագուհու Կայսրուհու և այլ բարձրագոյն անձանց ու բարձր պաշտօնեաների ներկայութեամբ։ Ս. Գէորգեան պատանչանի ասպետներին տուած ճաշկերոյթի ժամանակ թագաւոր կայսրը, ինչպէս հաղորդում է «Гражданинъ» լրագիրը, կրում էր Նիժէգորոդեան դրագունների համազգեստը։—«Новое Время» լրագրին հեռագրում են Սեվաստոպոլից, որ այնտեղ կալանաւորված է մի անգլիացի, որը տեղական ամրութիւններից պլաններ էր հանում։ Դա առաջին դէպքը չէ, որ կալանաւորէին կասկածաւոր ճանապարհորդներին։—Պետերբուրգում տարածված գրիպ հիւանդութիւնը, որը կրում է ինֆլուէնցա անունը, զգալի կերպով նուազում է։ Իսկ Ռուսաստանի ներքին գաւառներից, նմանապէս Աւստրիայից և Ֆրանսիայից լուրեր են ստացվում այդ հիւանդութեան տարածման մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 Նոյեմբերի։ Թագաւոր Կայսրը, Օստաշկովեան և Բիազանեան ազնվականութեան կողմից երկար-ժամանակեայ կրէդիտի պայմանների թեթեացնելու առիթով ներկայացրած ուղերձները կարդալուց յետոյ, Բարձրագոյն հրամայել բարեհաճեց. շնորհակալութիւն յայտնել յիշեալ ազնվականութիւններին։—Պօղպօրուչիկ, Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչ նշանակված է Ֆլիգել-ադիւտանտ։

ԲՐԻՆԴԻԶԻ, 28 Նոյեմբերի։ Երէկ երեկոյեան հասաւ այստեղ Մեծ Իշխան Պետր Նիկոլաեվիչ իր Ամուսնու և սվիտայի հետ և մտաւ չոգենաւ, որը ուղղորվում է զէպի Ալէքսանդրիա։

ՊԱՐԻԶ, 28 Նոյեմբերի։ Ազգային ժողովի այսօրվայ նիստում Դէրուլէդի առաջարկութիւնը՝ Բուլանժէի ընտրութիւնը վաւերական ճանաչելու՝ մերժված է ժողովից։

ԼՈՆԴՈՆ, 28 Նոյեմբերի։ Լոնդոնի շրջականերում ինֆլուէնցա հիւանդութեան երկու դէպքեր են յայտնվել։—Էմին-փաշայի առողջութիւնը լաւանում է։

—

### Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 28-ին

| | | |
|---|---|---|
| Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ— . . | 92 ր. | 80 › |
| Բերլինի վրա 100 մարկ — . . | 45 › | 35 › |
| Փարիզի վրա 100 ֆրանկ — . . | 36 › | 65 › |
| Ոսկի — արժէ — . . | 7 › | 48 › |
| Մաքսային կուպօններ — . . | 149 › | 75 › |
| Արծաթ — — — . . | 1 › | 11 › |
| Բօրսային դիսկօնտներ — . . . | 6 և | 7% › |
| Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի | 99 › | 75 › |
| — — — — 2-րդ — | 99 › | — › |
| — — — — 3-րդ — | 98 › | 87 › |
| — — — — 4-րդ — | 99 › | — › |
| — — — — 5-րդ — | 98 › | 87 › |
| — — — — 6-րդ — . | 98 › | 87 › |
| Նոր 4% . . . . . | 84 › | 37 › |
| Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ. | 99 › | 25 › |
| — — 2-րդ — | 99 › | 12 › |
| — — 3-րդ — | 99 › | 25 › |
| Ներքին 5% առաջին փոխառութ. | 255 › | — › |
| — երկրորդ — | 226 › | — › |
| 5½% բէնտա. . . . . | 102 › | — › |
| Ոսկեայ բէնտա. . . . . | 169 › | 25 › |
| Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ. . . | — › | — › |
| Նոր երկաթուղային բէնտա . . . | 99 › | 25 › |
| 5% գրաւական թղթեր կալուած. | | |
| փոխ. կրեդ. ընկ. մետ. . . . . | 146 › | — › |
| — — թղթադ. . | 92 › | — › |
| Գրաւ. թղ. Ազնս. բանկի . . . | 98 › | — › |
| Գիւղական բանկի . . . . . | 102 › | — › |
| 6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ. | — › | — › |
| —. —Ռութայիսի-18 և 43տ. | — › | — › |
| Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ . . . . . | 93 › | 75 › |
| Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ . . | 93 › | 25 › |
| Օդէսայի — — . | 93 › | 50 › |
| Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. . | — › | — › |

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ


## ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

ՇԱԲԱԹ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1889 ԱՄԻ

լինելու է

ՑՕԳՈՒՏ „ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ"

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Մուտքը՝ կանանց համար 1 ր., տղամարդոց՝ 2 ր.

Ֆրակը անհրաժեշտ է միայն պարողների համար։

Տոմսակները կարելի է վաղօրք գնել՝ պ.պ. Ծատուրեանի և Տէր-Սարգսեանի խանութներում և „կենտրոնական գրավաճառանոցում" իսկ պարահանդէսի երեկոյեան ժողովարանի շվեյցարի մօտ—Սկիզբն է երեկոյեան 9 ժամին։

1—2

По семейнымъ обстоятельствамъ ПРОДАЕТСЯ сельская **АПТЕКА** въ уѣздномъ городѣ Новобаязетѣ. Подробности у владѣльца.

Ընտանեկան պատճառներով ծախվում է ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ գաւառական քաղաքում մի գիւղական **ԴԵՂԱՏՈՒՆ**։ Պայմանների մասին տիրոջից տեղեկանալ։

2—4 (ե. 2.)

ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ 1889 Թ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

լինելու է

## ՊԱՐԱՀԱՆԴԷՍ-ՎԻՃԱԿԱԽԱՂՈՎ

Ցօգուտ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան։

Տոմսակների գինն է՝ տղամարդկանց 2 ր. կանանց 1 ր.

1—2

---

## ՐԻԳԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱԼԶԱՄԻ, ԼԻԿԵՐՆԵՐԻ ՕՂԻՆԵՐԻ, ԿՕՆԻԱԿԻ, ՐՈՄԻ ԵՒ ԱՐԱԿԻ

Պատրաստում է ՎԻԵՆՆԱՅԻ ԹԹԽՄՈՐ, մաքրում է ՍՊԻՐՏ և պատրաստում է ՄԱՔՐՎԱԾ ՕՂԻ։

## —Ա. ՎՕԼՖՇՄԻՏ, ՐԻԳԱՅՈՒՄ—

Սպառողներից լաւը է հասնում ինձ, որ Ռիգայի սև բալզամը, որը գործ է ածվում տենդի, վատ մարսողութեան և այլ ցաւերի դէմ, ծախվում է ոչ թէ միայն այլ և այլ գներով (նայելով իր արժանաւորութեան ու յատկութեան), բայց և ունի զանազան այս կամ այն համ, այնպէս որ առնողը, ստանալով զանազան բալզամներ, հաւատ է կորցնում դէպի այդ խմիչքը, որի պատճառով ես իմ կողմից պարտաւորութիւն եմ համարում յայտնել ընդհանուր տեղեկութեան, որ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՐԻԳԱՅԻ ԲԱԼԶԱՄԸ, ինչպէս առաջ էր, այնպէս և այժմ, ունի միմիայն ՄԻ ՏԵՍԱԿ ՀԱՄ, թէև տեսակին նայելով զանազան գներով է ծախվում։

Բայց սրանից անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել և այն հանգամանքի վրա, որ իմ ՄԻԱԿ ԻՍԿԱԿԱՆ Ռիգայի բալզամը կրում է սև գոյնի էտիկէտը՝ ոսկեայ, արծաթեայ և բրօնզեայ կնիքով, նայելով թէ Ա. Բ. կամ Գ. տեսակի է, վերև կրում է ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐՕՇՄ, իսկ կողքերից զանազան յուցահանդէսների պարգևները։ Այն ինչ ՐԻԳԱՅԻ Ա-ՆՈՒԱՆՎԱԾ բալզամը, որը կրում է սպիտակ էտիկէտներ, Ռիգա քաղաքի պատկերով,— դա մրցութեան արդիւնք է և ոչինչ կապ չունի իմ միակ և իսկական, կոնցէնի դեղատոմսով (որը ես ժառանգել եմ) պատրաստած բալզամի հետ և որը կրում է 1845 թվից գոյութիւն ունեցող իմ ֆիրման։

4—10 (Հ.) № 3 Ա. ՎՕԼՖՇՄԻՏ, Ռիգայում։

---

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՈԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

**ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ.** ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան գեղաւաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկովսկու և Ագմուրովի գեղատներում։ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ, ԲԷԿԿԷՐԻ մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կոկոչեվի մօտ, ՍՏԱՎՐՈՊՕԼՈՒՄ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։ 41—52 (Հ.)

ЗУБНЫЯ КАПЛИ: коп. 50 к.
ЗУБНОЙ ПОРОШОКЪ: коп. 30 к.
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ: фл. 80 к.
А. ШТЕХЕРЪ.

---

## ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադէական և գալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամալուծութիւնից, ըէվմատիզմից, ներվային հիւանդութիւններից և կօնրակտուրայից (մկանունքների անդամալուծութիւն), բժշկում է կոյրերին և խուլերին անդամալուծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին։

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ։ Տուն Պոպովի Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Ելիսավէտինսկայա № 2, Ինտենդանտութեան մօտ, Վօրոնցօվեան կահաւորված սենեակների դիմաց։

Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства, противъ Воронцовск. номеровъ. 1—10

---

Լոյս տեսաւ Ց. Իսուֆեանի հրատարակութեամբ առանձին գրքոյկով

## ԵՆԻՉԵՐԻ

(Թիւրքահայերի կեանքից)

Գրեց Վ. Փափազեանց

(Արտատպած „Մշակ“ լրագրից)

Գինն է 5 կօպէկ։

5—5

---



ՍՏԱՑՎԱԾ ԵՆ

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

(ԹԱՄԱՄՇԵՎԻ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅՈՒՄ)

Անգլիական մահճակալներ, թամբեր, ամաններ, կարպետներ, սապօն, գրչահատներ, մկրատներ, ածիլներ, մատուցարաններ, պատրօններ, դիլզաներ (3 ր. հարիւրը) կլէենկա, արտաքնոցների համար թուղթ, գլխի և շորերի վրձիններ, բիսկվիտներ, թէյ, թէյամաններ, գրիչներ, մատների վերանորոգիչ Մակ-Մաստեր և այլն։ 6—10

---

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 Г.

(ТРЕТІЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

## „ПАНТЕОНЪ ЛИТЕРАТУРЫ“

ЕЖЕМѢСЯЧНЫЙ ИСТОРИКО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛЪ.

Въ предстоящемъ году „Пантеонъ Литературы“ будетъ издаваться по прежней программѣ и при участіи прежнихъ сотрудниковъ.

Въ числѣ произведеній, предназначенныхъ къ помѣщенію въ первыхъ книжкахъ журнала, назовемъ слѣд: 1) Полное собраніе сочиненій Василія Петровича Боткина, автора „Писемъ объ Испаніи“ и пр., 2) Поэмы Оссіана, перев. съ примѣч. и предисловіемъ Е. В. Балобановой, 3) Письма темныхъ людей, перев. А. И. Кирпичникова, 4) Чосеръ, Кентерберійскіе разсказы, перев. М. И. Кудряшева, 5) Аріосто, Неистовый Роландъ, поэма, перев. С. Ф. Уварова 6) Л. Н. Майкова, Матеріалы для біографіи Вал. Н. Майкова, 7) М. Гюйо, Современная эстетика, и мн. др.

ПОДПИСНАЯ ЦѢНА: Съ дост. и перес. на годъ. 8 р., 6 мѣс. 5 р., 1 мѣс. 1 р.,

Выписывающіе „Пантеонъ Литературы“ за 1888 и 1889 гг. уплачиваютъ: за всѣ три года—20 р., за два года—15 р. Разсрочка платежа—по соглашенію.

Подписка принимается: въ редакціи журнала „Пантеонъ Литературы“ въ Спб., Захарьевская, д. 19, а также въ книжныхъ магазинахъ „Новаго Времени—въ С.-Петербургѣ, Москвѣ, Харьковѣ и Одессѣ. Книгопродавцамъ дѣлается уступка въ размѣрѣ 5%.

5—5 Редакторъ-издатель А. Чудиновъ.

---

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԼԷՕԻ

## „ԿՈՐԱԾՆԵՐ“

ՎԷՊը։

Գինն է 50 կօպէկ։ Կարելի է գնել Թիֆլիսի գրավաճառանոցներում։

3—5

---

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամացաւի
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքչաբթի, ուրբաթ և կիւրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5½—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտերապիա)։
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցումն են մանկաբարձուհիք՝ Երևանցեան և Արտաղեան։

Ճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՕՎՍԿԻ

---

## COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ։

Ուրբաթ, 8/20 Դեկտեմբերի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ ALPHÉE (ԱԼՖԷ)։ Նաւապետ AUGÉ (ՕԺԷ), մտնելով Կ. Պոլիս, Պօրտ-Լահօս և Լակավաչ։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՕԼԴԼՈՒՍ։ 1—2

---

UN ANGLAIS donne des leçons de langue anglaise. S'adrésser au bureau de la Rédaction du journal arménien le ‹Mschak›.

АНГЛИЧАНИНЪ даетъ уроки англійскаго языка. Обратиться за адресомъ въ редакцію газеты ‹Мшакъ.›

ՄԻ ԱՆԳԼԻԱՑԻ տալիս է անգլիական լեզուի դասեր։ Դիմել ‹Մշակի› խմբագրութեան։

8—10 (Հ.)

---




Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ե)

---

Abonnementseinladung au

die meist verbreiteie deutsche Wochenschrift:

## Das Echo

(Stimmen aus allen Parteien.)

Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft.

Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirtschafilichen, wissenschaftlichen nnd gesellschaftlichen Borgänge, welche sich in Deutschland nnd Auslande abspielen.

Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen.

Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit.

Das Echo bring in jeder Rummer ein bis zwei abgeschlossene Novelletten, Erzählungen u. s. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schrifteller.

Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben ans den bedeutendsten Erscheinungen des internationalen Büchermarktes.

Das Echo betrachtet es insbesoudere als seine Aufgabe, dem Leben nnd Treiben der Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden.

Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein „Bote aus der Heimat“ sein, deshalb ist auch sein Abonnementspreis ein sesr niedriger. Es versendet die Expedition in Berlin S. W. das Echo nach allen zum Weltposiverein gehörirten Ländern für 4 Mark 50 Pt. vierteljährlich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieen außerhalb des Weltposivereins für 23 Mark ganzjährig.—Zahlungen geschehen am raschesten und sichersten durch Postanweisung oder durch Anweisung auf deutsche Banken.—Ebenso liefert jede dentsche Buchhandlung und Zeitungsagentur im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern find durch die letzteren zu beziehen oder auch direkt von

J. H. Schorer,
Verlag des Echo, Berlin S. W.

---

Дозволено цензурою, Тифлисъ 29 Ноября 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.